Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն ԹԻՎ 3

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

26 սեպտեմբերի 2016թ.

ք.Կապան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի խորհրդի նիստին մասնակցում էին մարզի խորհրդի անդամներ, մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներ, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. **Մարզում աշնանացանի աշխատանքների ընթացքի և խնդիրների մասին:**

/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ս. Թանգյան/

2. **ՀՀ պետական բյուջեով և այլ միջոցներով մարզին վերաբերող ծրագրերի կատարման ընթացքի մասին:**

/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Հովհաննիսյան/

3. **ՀՀ Սյունիքի մարզի քաղաքացիական պաշտպանության համակարգի հիմնական միջոցառումների պլանի կատարման ընթացքի մասին:**

/Զեկուցող՝ ՀՀ ԱԻ նախարարության փրկարար ծառայության ՀՀ Սյունիքի մարզի փրկարարական վարչության պետ Բ. Զաքարյան/

Մարզի խորհրդի նիստը բացեց ՀՀ Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյանը:

Օրակարգի առաջին հարցի՝ ,, **Մարզում աշնանացանի աշխատանքների ընթացքի և խնդիրների մասին,,** զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ս. Թանգյանը:

Օրակարգի երկրորդ հարցի՝ ,, **ՀՀ պետական բյուջեով և այլ միջոցներով մարզին վերաբերող ծրագրերի կատարման ընթացքի մասին,,** զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Հովհաննիսյանը:

Օրակարգի երրորդ հարցի՝ ,, **ՀՀ Սյունիքի մարզի քաղաքացիական պաշտպանության համակարգի հիմնական միջոցառումների պլանի կատարման ընթացքի մասին,,**

զեկուցումով հանդես եկավ ՀՀ ԱԻ նախարարության փրկարար ծառայության ՀՀ Սյունիքի մարզի փրկարարական վարչության պետ Բ. Զաքարյանը :

Օրակարգում ներառված հարցերի շուրջ ելույթներով հանդես եկան Գորիս համայնքի ղեկավար Վ.Ադունցը, Մեղրի համայնքի ղեկավար Մ.Զաքարյանը և Աղիտու համայնքի ղեկավար Ա.Ավետիսյանը:

Հայտարարությամբ հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալական զարգացման վարչության պետ Հ.Հովհաննիսյանը:

Տեղական ինքնակառավարման մարմինների նորընտիր ղեկավարներին շնորհավորեց և մարզի խորհրդի նիստի աշխատանքներն ամփոփեց ՀՀ Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյանը:

ՀՀ Սյունիքի մարզպետ **Ս. Խաչատրյան**

Կատ. Ս. Սահակյան
Հեռ. (0285) 2-63-55